# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ ենթակետի և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.07.2018թ. թիվ 13/15-Լ որոշմամբ հաստատված Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի 5–րդ կետի պահանջներով,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդի 18.12.2019թ. թիվ 24/22-Լ որոշմամբ սահմանված՝ Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի հանրային պաշտպանների հաստիքների թվաքանակը (59),

հաշվի առնելով հանրային պաշտպանների մասնագիտացումները սահմանելու և հաստիքները տեղաբաշխելու անհրաժեշտությունը,

ի գիտություն ընդունելով Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջարկությունը,

***Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝***

1. 2021 թվականի հունվարի 1-ից **59 (հիսունինը)** հանրային պաշտպանի հաստիքները տեղաբաշխել հետևյալ կերպ՝
   1) Երևան քաղաքում՝ **30 (երեսուն)** հաստիք, որից 22 (քսաներկու) հաստիքը՝ քրեաիրավական մասնագիտացմամբ, իսկ 8 (ութ) հաստիքը՝ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) մասնագիտացմամբ.
   2) մարզերում՝ **29 (քսանինը)** հաստիք՝ համաձայն հավելվածի:

2. 2021 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 20.12.2019թ. թիվ 514-Լ որոշումը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

**06 նոյեմբեր 2020թ.**
**թիվ 378-Լ**
**ք.Երևան**

*Հավելված՝*
*Հայաստանի Հանրապետության*
*փաստաբանների պալատի նախագահի*
*06.11.2020թ. թիվ 378-Լ որոշման*

*ՀՀ փաստաբանների պալատի*
*նախագահ՝ Արա Զոհրաբյան*

## ՄԱՐԶԵՐՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ

**(գործում է 2021 թվականի հունվարի 1-ից)**

| № | ՀՀ մարզ | ՀՊԳ նստավայր | Հաստիքների բաշխում | | | Հաստիք-ների ընդ. քանակը | ՀՊ-ների քանակը | Գործունեության վայր |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | | | 5 | 6 | 7 |
| 1. | **Արագածոտն** | Աշտարակ | 1 | 1 | | 2 | 2 | **Աշտարակ, Ապարան, Թալին** |
| 2. | **Արարատ** | Արտաշատ | 0,5 | 0,5 | 0,5 | 3 | 7 | **Արտաշատ, Մասիս, Արարատ, Վեդի** |
| | | | 0,5 | 0,5 | 0,25 | | | |
| | | | 0,25 | | | | | |
| 3. | **Արմավիր** | Արմավիր | 0,5 | 0,5 | | 4,25 | 8 | **Արմավիր, Էջմիածին** |
| | | | 0,5 | 0,5 | | | | |
| | | Էջմիածին | 1 | 0,5 | | | | |
| | | | 0,5 | 0,25 | | | | |
| 4. | **Գեղարքունիք** | Գավառ | 0,5 | | | 1,75 | 4 | **Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ** |
| | | Սևան | 0,5 | 0,25 | | | | |
| | | Վարդենիս | 0,5 | | | | | |
| 5. | **Կոտայք** | Հրազդան | 0,5 | 0,5 | | 3,75 | 7 | **Հրազդան, Չարենցավան, Եղվարդ, Աբովյան** |
| | | Աբովյան | 0,5 | 0,5 | 0,25 | | | |
| | | Եղվարդ | 1 | | | | | |
| | | Չարենցավան | 0,5 | | | | | |
| 6. | **Սյունիք** | Կապան | 0,5 | 0,5 | 0,5 | 2,25 | 5 | **Կապան, Գորիս, Սիսիան, Քաջարան, Մեղրի** |
| | | Գորիս | 0,5 | 0,25 | | | | |
| 7. | **Վայոց Ձոր** | Եղեգնաձոր | 0,5 | 0,25 | | 0,75 | 2 | **Եղեգնաձոր, Վայք** |
| 8. | **Տավուշ** | Իջևան | 0,5 | 0,5 | 0,5 | 2,75 | 6 | **Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ** |
| | | Բերդ | 0,5 | 0,5 | | | | |
| | | Դիլիջան | 0.25 | | | | | |
| 9. | **Լոռի** | Վանաձոր | 1 | 1 | 1 | 4,5 | 6 | **Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի** |
| | | | 0,5 | 0,5 | | | | |
| | | Ալավերդի | 0,5 | | | | | |
| 10. | **Շիրակ** | Գյումրի | 1 | 1 | 1 | 4 | 6 | **Գյումրի, Արթիկ, Մարալիկ, Աշոցք** |
| | | | 0,5 | 0,25 | 0,25 | | | |
| **Ընդհանուր թիվը** | | | | | | **29** | **53** | |